



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. առաջին եռամսյակում /վերլուծություն/

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 28542 գործարքներ, որոնց քանակը 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 31.4%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 18.6%-ով:

2009թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7921 օտարման գործարքների 74.7%-ը կազմել են առուվաճառքները, 24.0%-ը՝ նվիրատվությունները և 1.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 32.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 34.0%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2009թ. առաջին եռամսյակում, 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 40.1%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 36.6%-ով:

2009թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. առաջին եռամսյակում, 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 40.0%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 40.7%-ով:

2009թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	առաջին եռամսյակ 2008թ.	առաջին եռամսյակ 2009թ.	չորրորդ եռամսյակ 2008թ.
Կենտրոն	472400	499200	493900
Արաբկիր	387600	365000	398300
Քանաքեռ-Զեյթուն	298200	283900	306600
Նոր-Նորք	259000	251400	269100
Ավան	259400	252500	272800
Էրեբունի	260000	266100	268600
Շենգավիթ	269200	254200	277400
Դավթաշեն	276900	278600	300500
Աջափնյակ	264500	246500	263400
Մալաթիա-Սեբաստիա	255500	237900	255900
Նուբարաշեն	145400	151800	162000
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	286200	280600	297100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են 5.6%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. առաջին եռամսյակում 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների նվազումը կկազմի շուրջ 10.9 տոկոս:

2009թ. առաջին եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 671 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 44.4%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 46.4%-ով:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության

արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին եռամսյակ 2008թ.	առաջին եռամսյակ 2009թ.	չորրորդ եռամսյակ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	115300	140200	141900
	Ապարան	31400	38600	36800
	Թալին	40600	48300	47800
Արարատ	Արտաշատ	91500	94600	107100
	Մասիս	119800	144700	141700
	Վեդի	76000	88900	84300
	Արարատ	58700	79200	72400
Արմավիր	Վաղարշապատ	154500	171400	177600
	Արմավիր	112900	116900	128100
	Մեծամոր	72100	84600	91300
Գեղարքունիք	Սևան	79600	98700	104400
	Գավառ	42400	52600	51600
	Մարտունի	63900	76900	72600
	Վարդենիս	29500	33900	33300
	Ճամբարակ	15700	17500	16800
Լոռի	Վանաձոր	82900	96300	103600
	Ստեփանավան	44500	53200	49500
	Մայիսակ	59600	67900	63700
	Ալավերդի	28100	34500	32900
	Տաշիր	29300	35300	33500
	Թումանյան	5500	5800	5600
	Շամլուղ	3200	3300	3200
	Ախթալա	12700	13400	13000
Կոտայք	Աբովյան	158700	149100	176300
	Նոր Հաճն	115100	131300	141800
	Բյուրեղավան	88600	107700	120300
	Եղվարդ	106800	123200	127500
	Հրազդան	60700	67500	75900
	Ծաղկաձոր	136000	175800	170000
Շիրակ	Չարենցավան	79500	94400	99900
	Գյումրի	88100	112300	121100
	Արթիկ	52400	65400	61000
Սյունիք	Մարայիկ	26100	31400	29400
	Գորիս	93000	119900	114600
	Կապան	81700	102400	107400
	Սիսիան	64500	91600	86800
	Մեղրի	44500	54500	49600
	Ազարակ	28400	32700	30300
	Քաջարան	42900	55300	53600
Վայոց Ձոր	Դաստակերտ	7000	7300	7000
	Վայք	69900	80600	83800
	Եղեգնաձոր	89600	108900	106400
Տավուշ	Ջերմուկ	121500	133000	143700
	Դիլիջան	82500	99400	106000
	Իջևան	113100	150300	146800
Բերդ	Բերդ	37500	42100	40600

	Նոյեմբերյան	29600	32800	31200
	Այրում	21000	22200	21100

2009թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են 2.0%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա 2009թ. առաջին եռամսյակում 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների նվազումը կկազմի շուրջ 7.5 տոկոս:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 849 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 167, մյուս մարզերում միասին վերցրած՝ 682: 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 37.3%-ով, ընդ որում, Երևանում՝ 38.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 37.0%-ով: 2008թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 41.3%-ով, ընդ որում Երևանում՝ 48.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 39.4%-ով:

2009թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	առաջին եռամսյակ 2008թ.	առաջին եռամսյակ 2009թ.	չորրորդ եռամսյակ 2008թ.
Կենտրոն	486000	514000	509500
Արաբկիր	396400	420000	438400
Քանաքեռ-Զեյթուն	307400	320100	325400
Նորք-Մարաշ	265800	313400	312700
Ավան	267100	287600	290700
Էրեբունի	265900	293600	290800
Շենգավիթ	273600	289500	293500
Դավթաշեն	288100	321100	324500
Աջափնյակ	270600	287500	301800
Մայաթիս-Սեբաստիա	266300	283000	295100
Նուբարաշեն	150600	170100	171000
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	294300	318200	323000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. առաջին եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են 1.5%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն

համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. առաջին եռամսյակում 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ նվազումը կկազմի շուրջ 7.0 տոկոս:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Սարգեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին եռամսյակ 2008թ.	առաջին եռամսյակ 2009թ.	չորրորդ եռամսյակ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	118900	147100	145000
	Ապարան	34500	40400	38900
	Թալին	43900	50600	48700
Արարատ	Արտաշատ	97500	106500	112200
	Մասիս	123500	151900	142500
	Վեդի	80400	92600	91700
	Արարատ	63900	81000	73100
Արմավիր	Վաղարշապատ	157300	179500	180300
	Արմավիր	116700	126700	132500
Գեղարքունի ք	Սևան	82000	106400	106900
	Գավառ	44900	57600	55200
	Մարտունի	67000	80300	77600
	Վարդենիս	31800	38500	37100
	Ճամբարակ	19300	22200	21300
Լոռի	Վանաձոր	88300	107600	109900
	Ստեփանավան	48900	56300	53800
	Մալիտակ	62900	70300	67600
	Ալավերդի	30600	37900	37300
	Տաշիր	32600	39300	37900
	Թումանյան	9200	10400	10400
	Շամլուղ	6200	7400	7400
	Ախթալա	15600	16500	16200
Կոտայք	Աբովյան	164100	179700	192000
	Նոր Հաճն	120700	144700	144500
	Բյուրեղավան	92000	121100	121900
	Եղվարդ	111500	134200	133600
	Հրազդան	64800	79400	80600
	Ծաղկաձոր	200100	277700	271100
	Չարենցավան	81900	102100	101500
Շիրակ	Գյումրի	93600	124800	123400
	Արթիկ	54600	67400	63700
	Մարալիկ	29800	33500	32700
Սյունիք	Գորիս	95100	129300	126300
	Կապան	85000	112900	109200
	Միսիան	67400	93600	88400
	Մեղրի	48000	56000	51700

	Ագարակ	30700	34700	33300
	Դաստակերտ	10000	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	74700	87600	86800
	Եղեգնաձոր	95500	114400	110400
	Ջերմուկ	70600	105500	100100
Տավուշ	Դիլիջան	86900	115800	119300
	Իջևան	115700	154700	148000
	Բերդ	39800	44400	42500
	Նոյեմբերյան	35000	36900	36600
	Այրում	22800	23900	23000

2009թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 1.4%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա 2009թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ կնվազեն շուրջ 4.3 տոկոսով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել են 2972 միավոր /2055.59 հա/ հողեր, որից Երևանում՝ 174 միավոր /134.91 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 86 միավոր /10.33 հա/ հողեր, որից Երևանում՝ 48 միավոր /2.96 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1509 միավոր /1738.23 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.30 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 967 միավոր /249.32 հա/, որից Երևանում՝ 116 միավոր /127.14 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 442 միավոր /42.56 հա/, որից Երևանում՝ 53 միավոր /7.45 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 40 միավոր /21.74 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.02 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 6 միավոր /0.57 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 7 միավոր /2.47 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /0.70 հա/:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 2576 միավորի /1781.83 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 147 միավոր /132.02 հա/, նվիրատվության գործարքներ՝ 339 միավոր /235.52 հա/, որից Երևանում՝ 20 միավոր /1.91 հա/ և փոխանակության գործարքներ՝ 57 միավոր /38.23 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.98 հա/:

Հանրապետությունում 2009թ. առաջին եռամսյակում, 2008թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 46.3%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 37.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 52.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 40.3%-ով: Հողերի

առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 589.88 հա, որից 580.01 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 24.9% կամ 641 գործարքներ /906.94 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 58 գործարքներ /124.06 հա/, իսկ 72.7% կամ 1873 միավորը /852.06 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 89 միավոր /7.96 հա/: 2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 62 գործարք /22.83 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2009թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակավայրերի հողեր		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	0	0.00	22	120.17	36	3.90	4	0.30	1	0.02	74	5.48	10	2.16				
Արագածոտն	69	494.04	0	0.00	3	0.14	17	3.39	106	85.97	0	0.00	58	5.94	3	0.38				
Արարատ	8	13.65	1	0.01	10	1.19	19	0.24	210	87.50	5	9.66	130	11.98	11	0.33				
Արմավիր	14	16.10	2	0.70	7	0.92	28	1.82	214	273.72	0	0.00	130	13.40	16	1.58				
Գեղարքունիք	10	79.23	1	0.02	13	1.23	18	3.71	70	59.91	0	0.00	51	5.79	10	2.86				
Լոռի	8	3.97	1	0.15	8	0.58	31	0.99	67	38.75	3	0.43	43	4.35	21	0.66				
Կոտայք	45	73.31	16	8.08	6	0.53	22	0.33	189	67.69	1	0.45	134	11.58	16	1.92				
Շիրակ	7	28.78	4	1.09	43	1.49	33	0.95	101	99.79	0	0.00	27	4.10	6	0.46				
Սյունիք	6	5.92	3	0.24	0	0.00	6	0.48	25	19.23	1	0.85	11	0.94	2	0.02				
Վայոց Ձոր	4	13.63	0	0.00	22	1.89	22	0.50	21	10.84	0	0.00	13	1.29	6	0.21				
Տավուշ	16	20.61	1	0.05	18	1.15	34	1.26	53	16.38	0	0.00	20	1.92	6	1.02				
Ընդամենը	187	749.24	29	10.34	152	129.29	266	17.57	1060	760.08	11	11.41	691	66.77	107	11.60				

Ստորև ներկայացվում է 2009թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	42	3.02	0	0.00	14	0.82	28	2.20	16	121.05	0	0.00	0	0.00	8	119.35	8	1.70
Արագածոտն	3	1.86	0	0.00	1	0.01	2	1.85	86	495.70	69	494.04	0	0.00	2	0.12	15	1.54
Արարատ	10	0.19	0	0.00	0	0.00	10	0.19	27	13.61	7	12.35	1	0.01	10	1.19	9	0.06
Արմավիր	7	0.59	0	0.00	1	0.06	6	0.53	38	13.68	8	10.85	2	0.70	6	0.85	22	1.28
Գեղարքունիք	3	0.19	0	0.00	1	0.06	2	0.13	39	84.00	10	79.23	1	0.02	12	1.17	16	3.58
Լոռի	2	0.01	0	0.00	1	0.01	1	0.003	45	5.53	7	3.83	1	0.15	7	0.57	30	0.98
Կոտայք	7	0.12	0	0.00	2	0.08	5	0.04	82	82.13	45	73.31	16	8.08	4	0.45	17	0.29
Շիրակ	12	0.69	1	0.35	4	0.14	7	0.20	75	31.64	7	28.78	3	0.75	39	1.35	26	0.76
Սյունիք	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	14	6.64	6	5.92	3	0.24	0	0.00	5	0.48
Վայոց Ձոր	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	47	16.02	4	13.63	0	0.00	22	1.89	21	0.50
Տավուշ	14	0.78	1	0.05	5	0.08	8	0.65	55	22.30	16	20.61	0	0.00	13	1.08	26	0.61
Ընդամենը	102	7.45	2	0.40	29	1.26	71	5.80	524	892.3	179	742.55	27	9.95	123	128.02	195	11.78

Հանրապետությունում 2009թ. առաջին եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 8 գործարքներ /6.69 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. առաջին եռամսյակում, 2008թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 70.9%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 63.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 71.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 69.3%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 75.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 70.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 42.6%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	40	38.00	32.2	410.5	153.1	77	46.72	365.0	12000.0	4069.3
Ապարան	1	2.50	119.7	119.7	119.7	2	0.55	86.5	2727.3	490.9
Թալին	26	453.39	34.0	80.0	49.3	18	21.62	93.6	5494.5	501.0
Ծաղկահովիտ	2	0.15	700.0	7000.0	3850.0	8	16.83	79.5	1000.0	218.5
Արարատի մարզ										
Արտաշատ	6	12.24	69.5	2590.4	1217.6	81	29.90	335.1	10833.3	1994.7

Մասիս	1	0.11	289.0	289.0	289.0	33	10.39	200.0	11904.8	2773.1
Վեդի						82	38.88	207.0	10795.1	1812.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	3.22	54.9	54.9	54.9	103	74.43	294.3	9090.0	1111.0
Բաղրամյան	1	1.00	188.0	188.0	188.0	24	150.18	90.6	2561.1	650.8
Վաղարշապատ	6	6.63	44.1	622.5	247.1	84	45.95	444.4	11764.7	2434.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						36	13.53	199.8	1875.0	447.3
Ճամբարակ	8	76.10	78.6	352.7	199.3	22	22.98	60.5	953.3	210.1
Մարտունի						3	0.56	51.1	2850.0	534.5
Սևան	1	1.50	197.0	197.0	197.0			52.2	2134.8	212.5
Վարդենիս	1	1.63	55.2	55.2	55.2	9	22.84	41.2	2575.1	353.4
Լոռու մարզ										
Ալավերդի						24	12.13	170.4	6424.2	1076.7
Գուգարք	5	2.08	112.7	400.2	367.4	13	6.31	234.6	6065.9	1063.7
Սպիտակ	1	0.90	648.3	648.3	648.3	1	0.92	250.0	5555.5	575.3
Ստեփանավան	1	0.85	728.6	728.6	728.6	7	4.75	90.6	1686.6	415.8
Տաշիր						22	14.63	45.3	1384.4	218.2
Կոտայքի մարզ										
Արմվյան	36	58.67	45.8	1329.7	381.2	76	21.30	279.3	11942.7	4750.4
Եղվարդ	6	10.74	126.3	877.3	458.5	83	30.39	174.4	11971.8	3329.9
Հրազդան	3	3.90	195.0	843.8	425.0	28	15.45	130.5	10256.4	1372.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	12.20	448.4	448.4	448.4	18	17.95	252.0	1693.1	483.8
Ամասիա	5	16.58	68.2	150.6	118.8	8	13.68	40.9	261.0	130.7
Անի						12	10.86	110.6	546.9	287.8
Աշոցք						15	46.47	58.5	215.8	124.4
Արթիկ						48	10.82	79.4	1428.6	205.0
Սյունիքի մարզ										
Գորիս	5	1.19	1211.0	1221.0	1221.0	6	7.93	92.6	1023.2	423.1
Կապան	1	4.73	230.3	230.3	230.3	1	0.86	120.0	841.6	258.8
Մեղրի						5	0.82	193.0	3000.0	556.8
Սիսիան						13	9.63	46.3	1977.4	292.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	0.93	45.5	178.3	111.9	11	2.43	125.0	10000.0	1433.7
Վայք	2	12.70	35.4	35.4	35.4	9	8.06	58.8	1430.7	520.5
Տավուշի մարզ										
Բերդ	3	1.49	361.6	519.6	440.6	23	5.18	213.3	3783.8	452.8
Իջևան	13	19.12	49.3	5808.0	986.1	6	2.29	267.5	9454.5	949.7
Նոյեմբերյան						24	8.92	46.7	7368.4	696.4

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	1225.0	175.0	2488.4	1331.7	54	49976.0	130.7	22200.0	2574.0
Ապարան						3	5112.0	124.1	609.6	233.0
Թալին						1	4360.0	63.2	1454.8	121.8
Ծաղկահովիտ								60.0	214.3	75.1
Արարատի մարզ										
Արտաշատ	7	8789.0	150.0	542.0	348.6	27	28480.0	173.9	7140.3	927.0
Մասիս	3	3092.0	1933.9	1934.2	1934.0	53	38568.0	187.5	25000.0	1220.9
Վեդի						50	52776.0	126.1	5000.0	680.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2600.0	112.0	425.3	320.8	49	57604.0	131.6	9090.9	1220.0
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	161.9
Վաղարշապատ	3	5955.0	1004.9	1004.9	1004.9	79	74332.0	197.4	26528.4	1560.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	4518.0	132.0	132.0	132.0	8	7120.0	186.6	1084.3	417.4
Ճամբարակ						3	2640.0	71.3	2286.2	117.0
Մարտունի	7	3358.0	113.4	133.4	115.1	32	37593.0	119.3	5000.0	272.8
Սևան	1	3841.0	432.1	432.1	432.1	3	3400.0	240.0	3110.4	192.1
Վարդենիս						5	7188.0	72.5	987.2	140.0
Լոռու մարզ										
Ալավերդի						7	8027.0	114.3	1388.9	165.7
Գուգարք	1	560.0	5331.9	5331.9	5331.9	21	18522.0	77.9	14083.3	665.3
Սպիտակ	5	4710.0	95.0	123.6	116.6	5	4640.0	104.9	1348.3	159.8
Ստեփանավան	1	400.0	554.5	554.5	554.5	8	9606.0	88.2	1666.7	128.2
Տաշիր						2	2700.0	45.3	400.0	74.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	4440.0	406.3	1742.0	852.2	57	46141.0	264.5	35353.5	2090.0
Եղվարդ	1	39.0	1617.2	1617.2	1617.2	61	52326.0	173.6	27000.0	2481.1
Հրազդան						16	17326.0	117.7	34848.5	1355.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	26	6772.5	290.4	5479.5	2850.5	9	11468.0	113.6	18750.0	335.1
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	9	5193.3	88.0	508.5	344.9	9	11983.0	67.9	180.6	108.2
Աշոցք						2	9680.0	40.8	144.0	58.4
Արթիկ	4	1500.0	38.8	275.0	136.1	7	7898.0	111.8	5000.0	211.7
Սյունիքի մարզ										
Գորիս						3	2420.0	112.2	1700.0	271.0
Կապան						2	1309.0	67.9	2638.9	219.6
Մեղրի						5	3030.0	68.5	632.9	137.2
Սիսիան						1	2630.0	123.5	875.0	155.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	22	18850.0	45.4	760.0	277.4	7	8853.0	96.7	7659.6	359.8
Վայք						6	4050.0	120.7	1448.3	138.3
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	91.5
Իջևան	13	10759.5	1428.3	2500.0	1862.2	17	14786.0	74.1	14423.1	478.8
Նոյեմբերյան						3	4410.0	125.0	1948.1	156.2

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 47 գործարքներ 16.43 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ /0.04 հա/ Արարատ, 32-ը՝ /3.88 հա/ Լոռու և 14-ը՝ /12.51 հա/ Շիրակի մարզերում:

2009թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2938 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.3%: Ընդ որում, վարձակալության գործարքների 73.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. առաջին եռամսյակում, 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 7.3%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 8.2%-ով:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 218 բնակարանների, 137 անհատական բնակելի տների, 1533 հասարակական, 194 արտադրական նշանակության օբյեկտների, 801 միավոր /5155.81 հա/ հողերի, 54 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 52 վարձակալության գործարքների, այդ թվում 20 միավոր /33.91 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 4.0%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել՝ 52.3%-ով:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 5155.81 հա հողերից 43.68 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 5112.13 հա հողերի 235.04 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 4.50 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 2863.67 հա, որից 2616.93 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 470.44 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. առաջին եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	9	23.09
Արարատ	4	20.65	32	52.45
Արմավիր	0	0.00	12	39.42
Գեղարքունիք	0	0.00	68	474.79
Լոռի	8	96.00	37	532.41
Կոտայք	0	0.00	14	412.60

Շիրակ	1	200.00	85	199.57
Սյունիք	3	153.79	86	2463.14
Վայոց Ձոր	0	0.00	81	94.40
Տավուշ	0	0.00	15	8.50
Ընդամենը	16	470.44	439	4300.37

2009թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2359 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.3%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 57.9%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 55.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /42.5%/, առանձնատների /21.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.4%/ և հողերի /16.5%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1098 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 50.1%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 43.3%-ով:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 2904.56 հա հողեր, որից 15.06 հա՝ Երևանում: Ընդ որում, հողերի 98.8%-ը, կամ 2869.41 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 2373.80 հա, որից 2372.70 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 88 գործարքներ, որից 68-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 73.9%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 14.8%-ը՝ անհատական բնակելի տների, 6.8%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 1.1%-ը՝ այգետնակների և 3.4%-ը՝ հողերի նկատմամբ: 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 3.4 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.2 անգամ, մարզերում միասին վերցրած՝ 4.1 անգամ, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 6.3 անգամ, ընդ որում Երևանում՝ 5.1 անգամ, մյուս մարզերում՝ 10.4 անգամ:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 12 և 2 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2009թ. առաջին եռամսյակում, 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 17.6%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 50.0%-ով: 2009թ. առաջին եռամսյակում մասնավորեցման գործարքների 42.9% արձանագրվել Գեղարքունիքի մարզում, 14.3-ական%՝ Արագածոտնի, Լոռվա, Շիրակի և Տավուշի մարզերում:

2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 4441 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 39.1%-ով, իսկ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 22.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.9%/: